ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնք
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2018թ. N 121–Ա

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԲ ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑ 1 ԹԻՎ 31/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԽՈՐ ԱՐՄԱՏ>> ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշման 2-րդ մասի 18 –րդ կետի գ/ ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինական ճանաչել <<Խոր Արմատ>> ՍՊԸ-ին պատկանող Կողբ համայնքի գ.Կողբ փողոց 1, թիվ 31/7 հասցեում գտնվող 11-041-0367-0006 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության/ 0.376 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված /1. պոմպակայան 128,960 քմ արտաքին և 99,760 քմ ներքին, աստիճան 12,400 քմ ներքին, 2. էլեկտրական հոսանքի ենթակայան 36,540 քմ արտաքին և 24,840քմ ներքին, 3. տնակ թիվ 1՝ 46,350 քմ արտաքին և 31,580քմ ներքին, հարթակ 3,600 քմ ներքին, 4. տնակ թիվ 2՝ 31,280 քմ արտաքին և 20,120 քմ ներքին, աստիճան 2,580 քմ ներքին/ շինությունները:

2. Օրինականացվող կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ

պահանջելու իրավունք:

3. <<Խոր Արմատ>> ՍՊԸ-ն Կողբի համայնքապետարանի 900395104111 գանձապետական հաշվին պետք է վճարի օրինականացման 200600 ՀՀ դրամ գումար՝ 243,13 քմ արտաքին և 194,880 քմ ներքին չափերով շինության օրինականացման համար:

4. Սույն որոշման ընդունման օրվանից հետո 60-օրյա ժամկետում և օրինականացված կառույցի վաճառքի գները չվճարվելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Չեղյալ համարել Կողբ համայնքի ղեկավարի 30 հոկտեմբերի 2018թ. №11-Ա որոշումը:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ